

Տեսնում ենք, որ այստեղ «կաթոլիկ դաւանանքին դարձնելու» խնդիր չկայ, այլ պարզապէս՝ «հայադաւան դարձնելու»: Եւ, իրօք, ուրիշ ի՞նչ կարող է նշանակել «հայկական ծէսի դաւանանք» արտայայտութիւնը, եթէ ոչ հայադաւանութիւն: Իսկ «կաթոլիկ դաւանանքին դարձնել» խօսքը գտնուում է այն № 906 լեհերէն նկարագրութեան մէջ, որ ժողովածուի կազմող-խմբագրողը նուիրել է արքայական այդ լատիներէն վաւերագրին: Նշանակում է՝ ժողովածուն կազմողի շարագրած տեղեկութիւնը, որ Պետրովիչը մեզ ներկայացրել էր որպէս պատմական աղբիւր, չի համապատասխանում Սիգիսմունդ Աւգոստոսի նամակի բովանդակութեանը: Ուստի եւ այստեղ, իրաւամբ, կարելի է ընդհանրապէս հարց դնել, թէ, ճշգրտութեան առումով, արդեօք որքանո՞վ են վատահելի այս ժողովածուի լեհերէն գրուած ծանօթագրութիւնները: Իսկ այդ մասին Պետրովիչն ինքն արդէն յայտնել էր իր կարծիքը, երբ մեր նոյն Սալմաստեցուն վերաբերող մի ուրիշ՝ 19 դեկտ. 1550 թուակիր թագաւորական վաւերագրի մասին էր խօսում, ասելով, թէ այնտեղ «դատական վճիռներու խմբագիրը լաւ հասկցած չէ վերոյիշեալ արքայական առանձնաշնորհումին բուն իմաստը»<sup>18</sup> կամ, ինչպէս իր իտալերէն հրատարակութեան մէջ էր կրկնում Պետրովիչը, «կազմողը չի հասկացել խնդրոյ առարկայ արքայական արտօնագրի իմաստը»<sup>19</sup>, եւ իր թէ՛ հայերէն, թէ՛ իտալերէն հրատարակութիւններում ամբողջութեամբ բերում էր իսկական վաւերագիրը՝ իր այս կարծիքը հաստատելու համար: Իսկ ներկայ դէպքում Պետրովիչն ինչ՞ով է փութկոտութեամբ առաջ քաշում կազմողի «կաթոլիկ դաւանանքին դարձնելու նպատակով» խօսքը, երբ գիտի, որ դա՛ էլ սխալ է, եւ զլանում է հայ ընթերցողին ներկայացնել բուն վաւերագիրը, որի պատճէնն իր ձեռքի տակ է եւ որը տեսանելի կը դարձնէր այդ սխալը:

Առաջ դնանք մի քայլ եւս:

Պետրովիչը արժապետում է լատիներէն լեզուին, բայց տուեալ դէպքում ժողովածուի կազմողին չի աւարկել, թէ լատիներէն ritus բառը նշանակում է ոչ թէ դաւանանք, այլ ծես. ընդհանրապէս՝ լուրիսյն հաւանութիւն է տուել, որովհետեւ դա յարմար է «կաթոլիկ դաւանանքին դարձնելու» համար: Սակայն տեսնում ենք, որ Պետրովիչը, բուն վաւերագիրը քննելիս, ուղեցել է ritus բառը հասկանալ նրա իսկական՝ ծես իմաստով եւ Armeni ritus orientalis (արեւելեան ծեսով հայեր) անուան տակ հասկանալ լաթինադաւան հայեր, որոնք արեւելեան (հայկական, ազգային) ծեսով եին վարուում, որպէս թէ ի տարբերութիւն այն լաթինադաւան հայերի, որոնք թողել էին ազգայինը եւ վարուում եին արեւմտեան (լաթինական) ծեսով: Իսկ այս ձեւով՝ Լուովի հայերը երկու դէպքում էլ դուրս կը գային որպէս լատինադաւան: Ինչպէս երեւում է, այսպիսի ելակէտով է, որ Պետրովիչն ուզում է արդարացի ցոյց տալ ժողովածուի կազմողին, որպէսզի Լուովի արեւելեան ծեսով հայերի (իմա՝ լատինադաւաններ) պատրիարք Սալմաստեցին կարողանայ հանդէս գալ յունադաւան երեխաներին իբր թէ լատինադաւան դարձնող:

Աւելորդ է ասել, որ այսպիսի մօտեցումը քննադատութեան չէր դիմանայ, քանի որ, ինչպէս ի պատմութենէ գիտենք, Լուովի արեւելեան ծեսով հայերը լատինադաւան չէին, այլ հայադաւան. այդպէս էր դրութիւնը մինչեւ 1630-ական թուա-

dica quod tempore nuper transacto Dominatio Tua, seu officialis Illius in spiritualibus, in civitate Leopoliensi, certos quosdam pueros duos sexus masculini fidei graecae, in minorennitate existentes, ab illorum legitima matre violenter rapisset ac in fidem ritus vestri armenici transtulissent baptismo [ac] iuxta ritum vestrum unxissent" (Փերարգոյ Արսէն Բալաբանը, որը Հալիչի, Լուովի եւ Կամենիցի առաջնորդն է, մեզ տեղեկագրեց, որ վերջերս Քո Տէրութիւնը, եւ կամ՝ Լուով քաղաքում հոգեւոր գործերի գծով նրա պաշտօնատարը, իրենց հարազատ մօրից բռնի խլել է արական սեռի երկու անչափահաս երեխաների, որոնք յունական դաւանանքին են պատկանում, եւ նրանք մկրտութեամբ ձեր հայկական ծէսի դաւանանքին են դարձուել [եւ] օծուել են ձեր ծէսով):

<sup>18</sup> ՊՄՍ էջ 32:

<sup>19</sup> PChA p. 96. իսկ ձեռագրի լուսապատճէնը՝ 181: